ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1956 Общественные науки

Մ. ՄԿՐՅԱՆ „ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ"

Մինչև 19-րդ դարը Գր. Նարեկացին հիմնականում գնահատվել է իբրև եկեղեցական գրող և անտեսվել են գրողի բանաստեղծական երկերի աշխարհիկ մոտիվները, որոնցով նա նոր էջ է բացանում հայ կուլտուրայի պատմության մեջ։ Միջնադարյան այդ գրական տրադիցիան մասամբ արտացոլվում է նաև 19-րդ դարում։

Պրոֆ. Մկրյանը իր գրքում[1] միանգամայն իրավացիորեն հակադրվում է այն գիտնականներին, որոնք հայ հին և միջնադարյան գրականությունը պատկերում են սոսկ իբրև եկեղեցական սխոլաստիկ գրականություն։ Նա գրական փաստերով հիմնավորում է, որ 5-րդ դարի եկեղեցական գրականության կողքին գոյություն է ունեցել աշխարհիկ գրականություն։

Այդ գրականության խոշորագույն ներկայացուցիչներն են՝ Մովսես Խորենացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին և այլ կլասիկ գրողները։

6-րդ դարում գրականության ու կուլտուրայի մեջ իշխում է եկեղեցին. ծաղկում են դավաբանական գրականությունը, կրոնական բանաստեղծությունը՝ շարականներն ու եկեղեցական տաղերը, թղթերը, քարոզները և այլն։ Այս կրոնական մռայլ շրջանում աշխարհիկ արվեստի ու գրականության զարգացումը մղվում է հետին պլանի վրա։

Պրոֆ. Մկրյանը հմտորեն ուսումնասիրել ու արժեքավորել է Հայաստանի 10-րդ դարի ընդհանուր կուլտուրան՝ ճարտարապետությունը, արվեստը, երաժշտությունը, գրականությունը և այլն։

Գրիգոր Նարեկացու «Տաղերն» ու «Մատեան ողբերգութեան» ստեղծագործությունները վերլուծելիս հեղինակը փորձում է հիմնավորել այն տեսակետը, թե հայ Վերածնության գրականության հիմնադիրն ու ռահվիրան Գրիգոր Նարեկացին է, որի գրական առաջադիմական ճանապարհով հետագայում ընթացել են՝ Հովհան Սարկավագը, Ներսես Շնորհալին, Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, Թլկուրանցին, Գրիգոր Ախթամարցին և շատերը։

Հեղինակը Նարեկացու տաղերը հակադրում է բանաստեղծի Գանձերին և Ներբողներին, որոնք զուտ եկեղեցական բանաստեղծություններ են։ Նարեկացին այդ երգերով միանգամայն դուրս է գալիս եկեղեցական բանաստեղծության նեղ շրջանակներից։ Այդ երգերը «արտացոլում են 10-րդ դարում հասարակության մեջ առաջացած հումանիստական տրամադրություններն ու մտածողությունը, որովհետև արժեքավորվում է իրական աշխարհն ու կյանքը, բնականաբար բանաստեղծության նյութ պիտի դառնային բնությունն ու մարդը»[2]։

Գրիգոր Նարեկացին իր Տաղերում հոռետես չէ, նա փառաբանում է կյանքն ու բնությունը. Նա գովերգում է արևը, որը կյանքի հիմքն է, լուսինը, աստղերը, համատարած ծովերը, հորդ գետերը, վտակները, լեռներն ու հովիտները, խուռներամ ծաղիկների փնջերը, հովտում շողշողացող շուշանները։

Մենդյան Տաղերը վերլուծելիս պրոֆ. Մկրյանը, գալիս է այն ճիշտ եզրակացության, որ այդ Տաղերից մեկում Գրիգոր Նարեկացին «երգում է մարդկանց դեպի երջանկություն մղող ու տանող սերը և այդ սիրո երգը, որ նմանապես մեր գրականության մեջ կատարյալ նորություն էր, հնչում է միաձուլված բնությանը՝ միշտ իրենց շարժման մեջ ընկալվող երևույթների շքեղ պատկերներին»[3]։ Նրա հիշատակված երգը իրապես 10-րդ դարի քնարերգության ամենագեղեցիկ բանաստեղծություններից մեկն է։ Այնտեղ Հիսուսի ծնունդը միանգամայն ձևական է. դաղափարական բովանդակությունն է կազմում սիրո և բնության գովքը, բնությունը շնչավորված է։

Ամպն ու ցողիկն էլ կապված են միմյանց հետ անբիծ սիրով. երփներանգ գարունը ցնծում

---

[1] Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1953 թ., էջ 308։
[2] Նույն տեղում, էջ 143։
[3] Նույն տեղում, էջ 195։

ու հրճվում է անաղարտ սիրո վայելքների հաշակելու համար, լուսինն ու բարկ աստղերը ճոխ ճեմում են այդ գարնանային զարմանահրաշ հարսանեկան հանդեսին. սերը մի տեսակ ներդաշնակում է բնությունն ու մարդը։

Պրոֆ. Մկրյանը մանրամասն վերլուծելով Նարեկացու «Տաղերը», վերջում կանգ է առնում այդ բանաստեղծությունների արվեստի վրա և բացահայտում է այն նորը, որ Նարեկացին մտցնում է հայ պոեզիայի մեջ։

Նրա գրքի ամենաուժեղ մասը հատկապես «Մատեան ողբերգութեան» կամ «Նարեկ»-ի վերլուծման բաժինն է։

Անցյալի բանասերներից շատերը «Նարեկը» համարում էին սոսկ որպես հոգևորական ողբ, իսկ նրա հեղինակի միստիցիզմը՝ ռեակցիոն ու անկումային։

Պրոֆ. Մկրյանը ապացուցում է, որ Նարեկացու միստիցիզմը յուրահատուկ սոցիալական բողոք է՝ ուղղված եկեղեցու, ֆեոդալական կարգերի և արտաքին բռնապետությունների դեմ։

Գրիգոր Նարեկացին մարգարտյայ բանաստեղծ չէ։ Նարեկացին շատ բարձր պատկերացում ունի բանականության մասին. «Նա անսահման սիրում է մարդուն և ցանկանում է, որ ամեն տեսակետից նա լավ լինի, որովհետև մարդը արժանի է դրան և լավ լինելու համար է ծնված. բայց կյանքի պայմանները վատացնում են նրան»[1]։ Պրոֆ. Մկրյանը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» քննադատական մոտիվները շատ լավ է բացահայտում։ Բանաստեղծը ներթողհայր Մովսես Խորենացու «Ողբի» ոգով քննադատում է Լպոխայի ամեն տեսակ այլանդակություններն ու թերությունները։ Նրա տեսակետով՝ վաճառականները վատնողներ են, որոնք չափից ավելի ցոփ ու շռայլ կյանք են վայելում։ Պետական պաշտոնյաները հարբեցողներ են, գանձապահները խարդախ, գիվանապետները օրենքներ խախտող, դատավորները կաշառառու, թագավորները մարդասպան, բարեկամները միմյանց դավաճան, հոգիները անսեր և առհասարակ Լպոխայի մարդկանցից շատերը այլասերված ու բարոյապես ընկած են։

Պրոֆ. Մկրյանը Նարեկացու ստեղծագործությունների սոցիալական մոտիվների մասին խորը ընդհանրացումներ կատարելուց հետո, գալիս է այն ճիշտ եզրակացության, որ «բանաստեղծի ողբերգությունը բխել է հիմնականում այն բանից, որ նա չի կարողացել հաշտվել դյուղացիական ֆեոդալական կեղեքման հետ։ Նրան ամենաուժեղ վիշտ ու թախիծ է պատճառել մարդկանց զրկանքներով լի կյանքը, թշվառությունն ու աղքատությունը»[1]։ Ընդունելի են նաև նրա այն պնդումները, որ Գրիգոր Նարեկացու ողբը անկումային չէ. «Մատեան ողբերգութեան» դիրքը սկսվում է հեծության ձայներով ու հառաչանքներով և վերջանում լավատեսական երգանքներով ու հեռանկարներով։ Նարեկացին ունի բնության և մարդկային անսահման սիրո դգացում։

Անցյալի բանասիրության մեջ արտահայտված է այն կարծիքը, որ իբր Նարեկացին ինքնամփոփ է եղել և կղզիացած։ Գրքի հեղինակը շատ հարուստ փաստերով ցույց է տվել, որ Գրիգոր Նարեկացին ինքնամփոփ չէ, որ նրա «Տաղերը» և «Մատեան ողբերգութեան» հոյակապ ստեղծագործությունների մեջ արտացոլվում է ժամանակաշրջանի հայ ժողովրդի կյանքն ու ոգին։ Նարեկացին նորը ճաշակով օգտագործում է հայ գուսանական երգերի և ժողովրդական բանահյուսության պես-պես խոսելաձևերի հարստությունները՝ աֆորիզմներ, ասացվածքներ, պատկերներ, էպիտետներ ու բանաստեղծական չափն ու հանգը։

Պրոֆ. Մկրյանը իր աշխատության վերջին գլխում ցույց է տվել, որ Նարեկացու ստեղծագործության հարստություններից օգտվել են նաև 19-րդ դարի մի շարք խոշորագույն բանաստեղծներ՝ Ղևոնդ Ալիշանը, Միսաք Մեծարենցը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Վահան Տերյանը, Հովհաննես Թումանյանը, Իսահակյանը և ուրիշները։

Պրոֆ. Մկրյանի «Գրիգոր Նարեկացի» մենագրության լեզուն պատկերավոր է, պարզ ու մաքուր։

Վերոհիշյալ արժեքավոր աշխատությունը զերծ չէ մասնակի թերություններից, որոնց մի մասը սոսկ վիճարանության նյութ կարող են դառնալ քննադատական գրականության մեջ։

Պրոֆ. Մկրյանը իր գրքի առաջին գլուխը վերնագրել է «Հայ գրականությունը Նարեկացուց առաջ»։ Հեղինակը հենց սկզբում իրավացի կերպով պնդում է, որ 5-րդ դարի հայ գրականության ամենաարժեքավոր սեռը պատմագրությունն է, սակայն այդ կարևոր ժանրի վրա շատ բիչ է կանգ առնում, անդամ չեն հիշատակված Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի նման տաղանդավոր պատմիչ հեղինակները, որոնց ստեղծագործությունները սերտորեն կապված են

[1] Մ. Մկրյան. Գրիգոր Նարեկացի, էջ 147։

մեր հին էպոսի և առասպելաբանության հետ։ Մովսես Խորենացու և Եղիշեի գրքերից բերված են միայն առանձին քաղվածքներ, իսկ թե այդ գրողները ի՞նչ տեղ են գրավում հայոց հին գրականության պատմության մեջ, դա ընթերցողի համար մնում է մութ։

Հեղինակը կանգ է առնում դավանաբանական գրականության վրա, որը սկիզբ է առնում 5-րդ դարի վերջերին և ծաղկում է 6-րդ դարում, պետք է ասել, որ նա եկեղեցական գրականության այդ ժանրի, ինչպես նաև շարականների ու կրոնական տաղերի գաղափարական բովանդակությունը լավ է բացահայտում։ Ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ 6-րդ դարի հայ գրականության մեջ իշխում է կրոնական և եկեղեցական ոգին՝ «աստվածաբանական սխոլաստիկան»։ Նա իր առջև մի շատ կարևոր պրոբլեմ է դնում՝ պարզաբանել եկեղեցական այդ սխոլաստիկայի տիրապետման սոցիալ-քաղաքական պատճառները։

Անշուշտ այդ ուղղությամբ որոշ փաստեր բերվում են, սակայն նրանք աշխատության մեջ իրենց հետագա զարգացումը չեն գտնում և այդ կարևոր պրոբլեմի լուծումը մնում է կես ճանապարհին։

Պրոֆ. Մկրյանի աշխատության մեջ շատ են գերագնահատված Թովմա և Անանուն Արծրունիները, որոնք արժեքավորվում են իբրև խոշոր գրողներ և Վերածնության ոգու արտահայտիչներ։

Հայ հին գրականության պատմության մեջ իրականում այդ երկու պատմիչները ունեն իրենց շատ համեստ տեղը։

Թովմա Արծրունին իր «Արծրունիների տան պատմության» մեջ ամեն կերպ ձգտում է ցույց տալ, որ իբր թե Արծրունյաց տոհմը մյուս նախարարական տների համեմատությամբ ունի շատ բարձր առավելություններ՝ ողջ Հայաստանի թագավորության գլուխ կանգնելու համար, այն էլ այնպիսի ժամանակ, երբ Բագրատունիները արդեն ստեղծել էին կենտրոնաձիգ պետություն, ուստի նրա հայրենասիրությունը տոհմատիրական նեղ բովանդակություն ունի, չնայած նա երբեմն քննադատական դիրք է բռնում դավաճան իշխանների նկատմամբ։

Թովմա Արծրունու միաբանության քարոզը՝ ընդդեմ արաբական բռնապետության, անտարակույս առաջադիմական և հայրենասիրական է, սակայն այս ուղղությամբ էլ նա ինչ որ նոր էջ չի բացում մեր գրականության համար։ Թովմայի գրքի 3-րդ գպրության առաջին գլուխը, ուր հեղինակը դնում է միաբանության խնդիրը, Եղիշեի «Վարդանանց պատմության» 4-րդ գլխի թույլ կրկնությունն է։ Արծրունին անգամ ոճական հասարակ արտահայտությունները, պատկերները ու էպիտետները վերցնում է Եղիշեի գրքից։

Նա անապարձորեն փառաբանում է Արծրունյաց կենտրոնախույս թագավորությունը՝ չունենալով ոչ Խորենացու և ոչ էլ Եղիշեի կենտրոնաձիգ միապետական գաղափարները, ապա լայն առումով նա դառնում է իբրև տոհմական պատմիչ, ինչպես Ստ. Օրբելյանը և ուրիշները։ Նա Բագրատունյաց որոշ թագավորների նկատմամբ ժխտական դիրք չի բռնում, ընդհակառակը, փառաբանում է նրանց, բայց գա չի փոխում նրա տոհմատիրական պատմահայեցողությունը։

Տոհմատիրական ձգտումները ավելի ուժեղ են Անանուն պատմիչի ստեղծագործության մեջ։ Վերջինս մոլեռանդ եղանակով ժխտական դիրք է բռնում Բագրատունիների կենտրոնական պետության նկատմամբ և արտահայտում է միայն Արծրունյաց ավատական տան նեղ շահերն ու գաղափարները։ Էլ ինչպե՞ս կարելի է Արծրունիների վերև նշված տոհմատիրական գաղափարները ամբողջապես գնահատել իբրև «ֆեոդալական սահմանափակությունը» հաղթահարող, «վերածնության քաղաքական տրամադրությունները և հումանիզմը» արտահայտող «պրոգրեսիվ իդեաներ»[2]։

Պրոֆ. Մկրյանը «Նարեկ»-ը վերլուծելիս երկար կանգ է առնում Նարեկացու աշխարհայացքի հակասությունների վրա և այդ հակասությունները իրավացիորեն կապում է դարաշրջանի հետ։ Մեծ բանաստեղծը իր աշխարհայացքով կապված էր սոցիալական հին և նոր հարաբերությունների հետ։ Նրա միանգամայն պրոգրեսիվ երազանքների կողքին առկա են նաև հետադիմական կարծիքներ։ Նա իր «Մատեան ողբերգութեան» սքանչելի պոեմում մի կողմից համարձակորեն, ինչպես նշվեց վերևում, քննադատում է թագավորներին, իշխաններին, առաքյալներին, բարձրաստիճան հոգևորականներին և ընդհանրապես էպոխայի ողջ թերություններն ու բացերը, իսկ մյուս կողմից նույն գրքում շատ անգամ դրվատում է պարազիտ խավի այդ ներկայացուցիչներին։ Նարեկացու հաշտվողականությունը ֆեոդալիզմի նկատմամբ և նրա խիստ սահմանա-

---

1 Տե՛ս Մկրյան, Գրիգոր Նարեկացի, էջ 103—111։

2 Նույն տեղում, էջ 98։

փակ աշխարհայացքի քննադատությունը գրեթե տեղ չեն գրավում Նարեկացու գլուխ-գործոցի «Նարեկ»-ի վերլուծության մեջ։

Պրոֆ. Մկրյանը Նարեկացու և Շնորհալու ստեղծագործությունների առնչակցությունները նշափելիս արտահայտում է այն կարծիքը, որ վերջինի «Ողբ Եդեսիոյ» պոեմի մեջ «հիմնականում արտահայտվում է Կիլիկիայի հայերի հայրենասիրական քաղաքական տրամադրությունները»։ Նույն կարծիքն է արտահայտել և Մանուկ Աբեղյանը։ Մեզ թվում է, Շնորհալին իր գլուխ-գործոցում արտահայտում է ամբողջ հայության քաղաքական և հայրենասիրական տրամադրությունները, որովհետև հայրենասեր բանաստեղծը երազում էր ամբողջ պատմական Հայաստանի տերիտորիայի վրա ստեղծել մեկ կենտրոնաձիգ պետություն, այդ նպատակի համար նա Եդեսիա քաղաքի բերանով կոչ է անում աշխարհի չորս կողմում ապրող հայությանը իրենց երկրում կենտրոնանալու համար.

«Չորեքծագեան կողմ աշխարհի,
Ո՞ւր են հանուր մարդկան որդի.
Զարեելրս արևմրտիւք,
Եվ ըզհարաւ ընդ հիւսիսի.
Առ որ գոչեմ ձայնիւ գուժի,
Լալով խոսիմ զայս ասելի.
Թէ ազգ ամէն բանաւորի,
Ժողովեցէք ի մի վայրի...»[1]։

Այս և սրանց նման մանր թերություններն ստվեր չեն կարող գցել պրոֆ. Մկրյանի «Գրիգոր Նարեկացի» աշխատության վրա, որը արժեքավոր մենագրություն է հայ խոշոր մտածողի մասին։

ԱՇ. ՄԿՐՏՉՅԱՆ

---

1 Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, էջ 20։